

и Кэл Шафа как результат народного дипломатизма и гражданской инициативы в конфликтной ситуации.

**ETHNIC VIOLENCE, COMMUNITY AND PUBLIC DIPLOMACY  
DURING THE KARABAKH CONFLICT  
(HISTORY OF THE EXCHANGE OF VILLAGES)**

**A. A. HAKOBYAN**

The last years of the Soviet Union and post-soviet period was accompanied by various conflicts such as political, social, economic crises and the inseparable part of which was the “refugee” phenomenon.

The Karabakh conflict which began in 1988 was also accompanied by the powerful waves of refugees.

The history of the exchange of Qerqenj and Khz Shafag villages is singled out on the general background of violence, evacuation as a result of public diplomacy and civil enterprise in conflict situations.

**ԹԵՐԼԵՐՅԱՆԻ ԶԻՆԱԿԻՑԸ**

**Ա. Ա. ՔԵԾԻԾՅԱՆ**

ԳՊՀ Պատմության թանգարանի ֆոնդապահ,  
ԳՊՀ դասախոս

Յայ Դատի պատմության մեջ 1921 թվականի մարտի 15-ը հիշատակվեց. այդ օրն էր, որ Բեռլինի Շարլոտենբուրգ պողոտայի Յարդենբերգ փողոցում Սոլդոնն Թեհլերյանի գնդակից ջախջախվեց երիտրուրբական ոհնակի գլխավոր պարագուս, Մեծ Եղեռնի կազմակերպիչ՝ Թալեաթի գանգը:<sup>1</sup> Յայ վիհմառուի նապատակն իրագործված էր, գործողությունն՝ արդարացված: Խսկ այդ նպատակի ճանապարհին Թեհլերյանը մենակ չէր: Լինելով Շահան Նաթալիի «Նեմեսիս» խմբի անդամ, նրա զինակիցներն էին Յակոր Չորյանը, Յրաչ Փափազյանը, Վահան Զաքարյանը, Լիպարիտ Նազարյանցը, նույն խմբի անդամներ էին՝ Յայոց Եղեռնի մյուս կազմակերպիչներին զգետնած Արշավոր Շիրակյանը,<sup>2</sup> Արամ Երկանյանը,<sup>3</sup> Միսար Թոռլաքյանը,<sup>4</sup> Յակոր Մերժանովը<sup>5</sup> և այլք: Սերունդ, որ քաջ գիտակցեց Նաթալիի խոսքերի խսկությունը. «Ով որ ոչինչ ունի կորսընցնելիք, ոչինչ ունի վախնալիք»:<sup>6</sup> Քաջաբար, առանց վախի, գիտակցումով ու խղճի մեծ պատասխանատվությանք՝ նրանք աներեր առաջ նետվեցին, հետապնդելով մեկ նպատակ՝ պատժել ողբագործներին:

<sup>1</sup> Սոլդոնն Թեհլերյանի դատավարությունը, Ե., 1990: **Առնո Յամելեն, Ժան Միշել Բրոն,** Վերականգնված հիշողություն, Ե., 1995, էջ 113-115:

<sup>2</sup> **Շիրակյան Ա.**, Կտակն էր նահատակներուն, Երևան, 1991:

<sup>3</sup> **Երկանեան Ա.**, Ասպէս սպաննեցինք, Լոս-Անձելէս, 1949:

<sup>4</sup> **Եղիայան Վ.**, **Արարյան Ա.**, Միսար Թոռլաքյանի դատավարությունը, Ե., 2008:

<sup>5</sup> **Մերժանով Յ.**, Իմ կտակը, Պէյրուր, 1972:

<sup>6</sup> **Շահան Նաթալի**, Թուրքերը և մենք, Ե., 1995:

Այս ամենը հայոց կողմից տրված արդարացի դատավճիր էր Եվրոպայի տարածքում թաքնված ոճրագործներին, ովքեր դիմել էին փախուստի: Հանցագործները դատապարտվել էին մահվան և աքտորի՝ իրենց իսկ երկրի նոր կառավարության ռազմական դատարանի կողմից: Նույն թալեաք փաշան առաջին անգամ մահապատժի էր դատապարտվել 1915թ. մայիսի 24-ին, իր մահից 6 տարի առաջ, երկրորդ անգամ՝ 1920 թվականին, սակայն հասցրել էր կեղծ անձնագրով փախչել Բեռլին:<sup>7</sup> 1943թ., երկրորդ համաշխարհային պատերազմի ժամանակ, Թուրքիան մեկ անգամ ևս ցույց տվեց իր իրական դեմքը: Նախագահ Իսմեթ Ինյոնուի իրամանով, ով թալեաքի քրոջ ամուսինն էր,<sup>8</sup> թալեաքի աջյունը տեղափոխվեց Ստամբուլ և հանդիսավոր վերաբաղվեց Ազատության բլրի վրա:<sup>9</sup> Դիշենք, որ նախքան թալեաքին հասնելը, Թեհիերյանը Պոլսում ահաբեկում է նրա հայ գործակալին՝ Հարություն Մկրտչյանին, ով հարստություն էր դիզել հայ ժողովրդի լավագույն զավակների արյան գնով, և ում կազմած ցանկով ձերբակալվեցին ու սպանվեցին Պոլսի հայ մտավորականները:

Թալեաքի ահաբեկնան գործողության պատմության մեջ իր եզակի դերն ունեցավ Հակոբ Նշանի Զորյանը: Ո՞վ էր նա, ում գիտակցական կյանքը եղավ հերոսական, իսկ վախճանը՝ դաժան, և այն էլ Հայաստան հայրենադարձվելուց հետո: Մարդ, ով շփելով հերոսական անհատների հետ, լինելով նրանց գինակիցն ու գաղափարական ընկերը, հանգամանքների բերումով՝ երբեք չխոսեց, այլ՝ լրեց նրանց մասին: Ոչ ոք, ըստ էության ճանաչելով նրան Խորհրդային Հայաստանում, չգիտեցավ, որ Հակոբ Զորյանը, նույն ինքը «Հազոր» /Վերցված են անվան և ազգանվան առաջին վաճները/ կեղծանունով Հայն է, հենց նա է, ում մասին տարիներ անց Սոլոմոն Թեհիերյանը հիշատակում է իր «Վերիիշումներ»-ում, և որն ազգային գործիչ Վահան Սինախորյանի գրառմանը տպագրվում է Կահիրենում՝ 1953 թվականին,<sup>10</sup> այն ժամանակ, երբ Զորյանն այլևս կենդանի չէր: Թեհիերյանն իրենց առաջին հանդիպմանը նրան իիշում է այսպես. «...Հայտնվեց Հազորը, 27-28 տարեկան մի թխաղեն երիտասարդ, որ ուսանում էր Բեռլինի համալսարանում: Նրա դուրեկան դեմքին պարզվեց մի լայն ժայռ, երբ ծանոթացավ հետսա...»:<sup>11</sup>

Մի կարծ ժամանակ Թեհիերյանն ապրում է Հազորի տանը, ով վտանգելով իր անձը, կրնկակոխ հետևում էր երիտրուրք պարագլուխներին, ողջ տեղեկատվությունը հանձնելով Նաքալիին՝ ճշշտ գործելու ծրագրերի համար: Առաջինն Հազորն է հայտնում, որ Բեռլինում տեսել է թալեաքին: Թեհիերյանի հիշողությամբ՝ նա տպագրիչ և գործուն հայ երիտասարդ էր. «Եռանդուն, աչքաբաց, բարեխիղճ և ամեն կազմակերպչական աշխատանքի համար անփոխարինելի մեկն էր նա»:<sup>12</sup>

<sup>7</sup> Սոլոմոն Թեհիերյանի դատավարությունը, էջ 3-4:

<sup>8</sup> Կիրակոսյան Զ. Ա., Երիտրուրքերը պատմության դատաստանի առաջ /1915-ից մինչև մեր օրերը/, հատ. 2, Ե., 1983, էջ 429:

<sup>9</sup> Դեյվիդ Մարշալ Լանգ, Քրիստոֆեր Ջեյմս Ուորքը, Հայերը, Ե., 1992, էջ 43:

<sup>10</sup> Թեհիերյան Ա., Վերիիշումներ. Դատավարությունը, Ե., 2006:

<sup>11</sup> Նշվ. աշխ., էջ 163:

<sup>12</sup> Նշվ. աշխ., էջ 191:



**Յակոբ և Եսրեք Զորյաններ**

Թեհլերյանի ձերբակալությունից հետո, Զորյանը հանդես է գալիս որպես թարգմանիչ և հնարամտորեն ողջ տեղեկատվությունը հետագա դեպքերի մասին, ինչ չգիտեր Սոլոմոնը, թարգմանությունների ընթացքում պատմում նույնիսկ Թեհլերյանի փաստաբան ֆոն Գորդոնի հարցաքննության ընթացքում: Թեհլերյանը իշխում է. «Նա կատարում էր ընդարձակ նորագրություններ՝ մեջընդմեջ լրացուցիչ հարցումներ անելով. այս ընդմիջումներին Յազորը պատմում էր»:<sup>13</sup>

Ոչ ոք չգիտեր ու չին էլ կարող պատկերացնել, որ ժամանակին լինելով «Նեմեսիս» խմբից, Յ. Զորյանը հետագայում կարող էր այդպես վարժ թաքցնել ու ծածկել իր հերոսական անցյալը ու ինքնությունը՝ Խորհրդային երկրի երկարյապարհապնդերից ներս:

Դեկավարել է պատասխանառու պաշտոններ. 1927-28թթ. նա Երևանի հանրային գրադարանի տնօրենն էր, 1932-35թթ.՝ Կուլտուրայի պատմության ինստիտուտի, իսկ 1936-37թթ. ստանձնում է Յայստանի պետական պատմական թանգարանի տնօրինությունը: 1930-37թթ. Երևանի պետական համալսարանի հայ ժողովրդի պատմության ամբիոնի վարիչն էր և պատմության ֆակուլտետի դեկանը:<sup>14</sup> Ամբիոնը հիմնադրվել է 1936թ., որի առաջին վարիչն էր Զորյանը: Ենտագայում նրան փոխարինում է բազմավաստակ պատմաբան, պրոֆեսոր Յանո Յարությունյանը: 1931թ. Յ. Զորյանին շնորհվում է պրոֆեսորի կոչում: Նախկին վրիժառուն, դաշնակցական գործիչը՝ զինվոր էր, մտավորական, կրթված անձնավորություն:

<sup>13</sup> Աշվ. աշխ., էջ 221:

<sup>14</sup> **Արմեն Սեւան**, Բանտարկեալի մը յուշերը, Երեւան, 2008, էջ 230: Յուշամատեան ՀՅԴ, 1914-1925թթ., Լոս-Անձելըս, 2001, հ. Բ, էջ 217: Ով ով է, Յայեր, Կենսագրական համրագիտաբան, Ե., 2005, հ. 1, էջ 402: Մեր անվանի դասախոսները, մաս 1, Ե., 1970, էջ 84-85:

Յ. Զորյանը, ինչպես արևմտահայ հատվածի յուրաքանչյուր սերունդ, 1915 թվականի Եղեռնի ականատեսն էր ու փրկվածներից: Ծնվել է 1894 թվականի ապրիլի 23-ին Տրապիզոնի նահանգի Օրդու քաղաքում: Արհեստավորի զավակն իր բնատուր կարողություններով ուսման էր ձգտում, և նախնական կրթություն ստանալով ծննդավայրում, 1908թ. մեկնում է Կ. Պոլս-ընդունվելով Պերպերյան հայտնի վարժարանը, որն էլ ավարտում է 1912թ.: Գերազանց առաջադիմությամբ: Վերադառնալով հայրենի քաղաք, Զորյանը՝ 1912-14թթ. նվիրվում է ուսուցչի վեհ ու պատվավոր, միաժամանակ դժվարին ու պատասխանատու աշխատանքին: 1915թ. նրա ընտանիքը հրաշքով փրկվելով այդ ցեղասպանությունը, ապաստանում է Բուլղարիայի Շումլե քաղաքում, որտեղ էլ Երիտասարդ մանկավարժը մինչև 1919 թվականը վարում է տեղի հայկական վարժարանի վարիչի, հայոց լեզվի և պատմության ուսուցչի պաշտոնները: Յետո մեկնում է Ծվեյցարիա՝ բարձրագույն կրթություն ստանալու նպատակով, ընդունվում Լոզանի համալսարանի փիլիսոփայական ֆակուլտետ: Մեկ կիսամյակ սովորելուց հետո անցնում է Գերմանիա՝ Բեռլին, որտեղ էլ ուսումը շարունակում է տեղի համալսարանի քաղաքատնտեսության ֆակուլտետում /1920-25թթ./: Տիրապետելով 5-6 լեզուների, Զորյանը աչքի ընկավ որպես առաջադեմ և տաղանդավոր ուսանող, ում նկատում են հայտնի գիտնականներ Զոմբարդը և Մարքվարտը, որոնց դեկավարությամբ էլ նա գրում է իր թեկնածուական դիսերտացիան՝ «Սոցիալական շերտավորումը միջնադարյան Յայաստանում»<sup>15</sup> թեմայով: Պաշտպանելուց հետո այն 1927թ. իրատարակում է Լայպցիգում: Այդ տարիներին նա թոքակցում էր Վիեննայի «Արեգ» ամսագրին: Եվ այս տարիներին է, որ անդամագրվում է «Նեմնեսիս» խնճակին: Ուսումնառության տարիներին Յ. Զորյանը մասնակցել է Գերմանիայի ուսանողական սոցիալիստական շարժմանը, ՅՕԿ-ի և նշանավոր հայասեր Յոհաննես Լեփսիուսի Գերմանահայկական ընկերության աշխատանքներին:

Գիտնակյանի ու մտավորականի նրա կյանքի վարագույրի տակ գինվորն էր, թերևս մտավորական գինվորը, ով մտածում էր. «**Զա՞րկ, երբ հալածում են թեզ...**» Ավ. Ահարոնյան/: Այդ զարկը եղավ ու ցնցեց ողջ աշխարհը:

1925 թվականին, երբ Զորյանն ավարտում է համալսարանը՝ փիլիսոփայության դոկտորի աստիճանով, միաժամանակ ստանում է երկու հրավեր. Խնճագրելու Փարիզի «Արեգ» թերթը, և դասավանդելու Երևանի պետական համալսարանում:<sup>16</sup> Անկասկած, առանց վարանելու՝ ընդունում է Մայր հայրենիքից ուղարկած առաջարկը, առանց կանխատեսելու, որ տարիներ անց, նույն հայրենիքում՝ այլ մտավորականների հետ, մատնիչի սարքած դավադրության զոհ կդառնա ու կվաստակի հայրենիքի դավաճանի պիտակը՝ իր մահկանացուն կնքելով հեռավոր Ուրալում: Կաքսորվի այն հայրենիքից, որն իրեն տուն էր կանչել:

Երևանում դասավանդում է համալսարանի պատմագրական ֆակուլտետում, իսկ 1926թ. ընտրվում Յայաստանի գիտության և արվեստի ինստիտուտի թղթա-

<sup>15</sup> **Sorian A. N.**, Die soziale Gliederung d. arm. Volkes in mittelalter, "Armenieca fasc", 11, Leipzig, 1927.

<sup>16</sup> Յովհաննիսյան Պ., Յակոբ Զորյան.- Երևանի համալսարան, Ե., 1976, թիվ 2, էջ 66-69: Քեշիշյան Մ. Ս., Թեհլերյանի գինակիցը.- Գեղամա աշխարհ, շաբաթաթերթ, 2012, օգոստոս 8 և սեպտեմբեր 10 համարներ, էջ 5:

կից անդամ, 1929-ից ստանձնում է պատմագրական ֆակուլտետի ղեկանի և հայ ժողովրդի պատմության ամբիոնի վարիչի պաշտոնները: Զգալի է նրա ավանդը պատմաբան մասնագետների պատրաստման գործում:

Հետաքրքիր են նաև Յ. Չորյանի գիտական աշխատանքերը և ուսումնասիրությունները, որոնք վերաբերվում են իհն և միջնադարյան Հայաստանի հասարակական-տնտեսական պատմությանը: Գիտական պատկառելի ժառանգության մեջ առանձնակի արժեք ունեն նրա՝ «Ֆեոդալական Հայաստանի գյուղացիական շարժումները Հ դարում»,<sup>17</sup> «Ներդասակարգային պայքարը հայ Արշակունիների թագավորության վերջին շրջանում»,<sup>18</sup> «Արտաշատի, Վաղարշապատի և Դվինի պրոբլեմը»,<sup>19</sup> «Արաբների հարկային քաղաքականությունը ավատափական Հայաստանում»,<sup>20</sup> «Արաբական շրջանում ֆեոդալական Հայաստանի քաղաքի և գյուղի միջև ստեղծված հակադրությունը»<sup>21</sup> աշխատությունները, նաև այլ ուսումնասիրություններ:<sup>22</sup> Մեծ է նրա Վաստակը հայ պատմագրության հարցերի լուսաբանման ուղղությամբ: Նա առաջինն էր, ով փորձեց գնահատել և արժեքավորել խորհրդային տարիներին ստեղծված պատմագիտական երկերը՝ հրատարակելով այդ հարցին նվիրված հոդվածներ,<sup>23</sup> թեև դրանցում որոշ հարցեր միակողմանի են լուսաբանվել:

Յ. Չորյանի ուսանողներից արվեստաբան, թատերագետ Ռուբեն Զարյանը իիշում է, որ. «Խոսուն էր հանգիստ, նախանձելի մի հանդարտությանը և թվուն էր ոչինչ, անզամ հրաձգությունը չի կարող փոխել նրա խաղաղ պատմելածնը, միայն դասամիջոցի զանգից հետո էր հարցնում՝ «Տղանե՞ր, չգիտե՞ք այս ինչ աղմուկ-աղաղակ է»».<sup>24</sup>

Թվում էր ամեն ինչ խաղաղ է: Նախկին դաշնակցականը այժմ կոնունիստա-

<sup>17</sup> **Զորյան Յ. Ն.**, Ֆեոդալական Հայաստանի գյուղացիական շարժումները Հ դարում.- Տեղեկագիր ԵՊՀ, 1928, թիվ 4:

<sup>18</sup> **Նույնի**, Ներդասակարգային պայքարը հայ Արշակունիների թագավորության վերջին շրջանում.- Տեղեկագիր ՀՍԽՀ Պատմության և գրականության ինստիտուտի, 1936, թիվ 1:

<sup>19</sup> **Նույնի**, Արտաշատի, Վաղարշապատի և Դվինի պրոբլեմը.- ՀՍԽՀ Կուլտուրայի պատմության ինստիտուտի «Աշխատությունների ժողովածու», Ե., 1935, հտ. Ա:

<sup>20</sup> **Նույնի**, Արաբների հարկային քաղաքականությունը ավատափական Հայաստանում.- ԵՊՀ «Գիտական տեղեկագիր», 1927, թիվ 2-3:

<sup>21</sup> **Նույնի**, Արաբական շրջանում ֆեոդալական Հայաստանի քաղաքի և գյուղի միջև ստեղծված հակադրությունը.- ՀՍԽՀ Գիտության և արվեստի ինստիտուտի «Տեղեկագիր», 1927-1928, թիվ 2-3:

<sup>22</sup> **Նույնի**, Արվու Յուսուփ Յակուբ, Հողային հարկի գիրքը.- ՀՍԽՀ Պատմության և գրականության ինստիտուտի «Տեղեկագիր», 1937, թիվ 2:

<sup>23</sup> **Նույնի**, Հայ բուրժուական պատմագրության կոնցեպցիան և Հայաստանի պատմության ուսումնասիրության հիմնական պրոբլեմները.- Նոր ուղի, 1931, թիվ 3: **Նույնի**, Վերջին տասնամյակի հայ պատմագրությունը.- ՀԽՍՀ մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի «Տեղեկագիր», 1932, թիվ 1: **Նույնի**, Состояние армянского историографии.- Труды первой всесоюзной конференции историков-марксистов, Москва, 1930, т. 1:

<sup>24</sup> **Զարյան Ռ. Վ.**, Մայրամուտից առաջ /Հուշագրություն/, Երկու դասախոս, Ե., 1988, հ.1, էջ 326:

կան կուսակցության շարքերում էր,և Խորհրդային կայսրության ներսում ոչ ոք չգիտեր նրա անցյալը: Խոկ անցյալը լի էր հետաքրքիր դեպքերով, անցյալ, որի էջերը լիքն էին Հայ Դատի պատմական դեմքերով, որոնց հետ բախտակից էր Եղել, սովորել, լսել ու պայքարել: Հետաքրքիր զուգադիպությամբ այդ տարիներին Հայաստան է հայրենադարձվում նաև Զորյանի նման մեկ այլ վրիժառու գործից նույն խմբակից: Այդ մարդը անվանի քանդակագործ Արա Սարգսյանն էր, Երևանի Գեղարվեստի ինստիտուտի հիմնադիրը, նկարիչների միության նախագահը: Նույն կյանքով ապրեց նա, թերևս բախտի բերմանք խուսափելով ստալինյան աքսորից: Սակայն միայն իր վախճանից քիչ առաջ /1969թ./ հատնի դարձավ, որ նա այն անձն է, ում մասին «Նեմեսիս»-ի անդամ, վրիժառու Արշավիր Շիրակյանը գրում է, իր «Կտակն էր նահատակներուն» գրքում<sup>25</sup>, հիշատակելով նրա միայն անվան սկզբնատառերը: Եվ տարիների հեռվից բնավ էլ տարօրինակ չի թվում այն ճիշտ դիտարկումը Ա. Սարգսյանի մասին, որը կատարել է Ո. Զարյանը իր հուշերում. «...Հայացքում միշտ մի հոգս կար»:<sup>26</sup>

Շիրակյանից շատ առաջ, դեռևս 1930 թվականին, Գերմանիայում հրատարակվում է մի գիրք՝ «Յինգ մատ գլխիդ վերև» վերնագրով,<sup>27</sup> որի հեղինակն էր հայ ժողովրդի մեծ բարեկամ, Եղեռնի ականատես Արմին Թեոֆիլ Վեգները: Մարդ, ում ողջ կյանքը հայ ժողովրդի արդար դատին ծառայելու անօրինակ սխրանք է, ով 1915 թ. կյանքի գնով նկարահանել էր թուրքի նախանձարդկային վայրագությունները, որպես անհերթելի վկայություն, փորձել օգնել հայերին: Այդ նա էր, որ 1919 թվականին գրեց իր հայտնի դիմումը՝ «Բաց նամակ ԱՍՍ-ի պրեզիդենտ Վուլոր Վիլսոնին»՝<sup>28</sup> ձգտելով հասնել ցեղասպանության բոլոր մեղավորների պատժին: Հետագայում Վեգներն էր, որ Թեհերյանի դատավարության ժամանակ հանդես եկավ նրա պաշտպանությամբ, գրելով այդ դատավարության սղագրական հաշվետվության նախարանը:

Վերոնշյալ գիրքը նվիրված էր 1927 թվականին նրա Խորհրդային Հայաստան կատարած այցելությանը: Անձանք, դեռևս Բեռլինից մտերիմ լինելով Յ. Զորյանին, Վեգները, ով Երևանում հանդիպել էր նրան, բազմիցս այցելել նրա ընտանիքն, հասկանալով, որ կարող է վտանգել Հայաստանում իր հետ առնչված հայ բարեկամներին, քաղաքական բարդություններ չհարուցելու համար՝ զգուշանում է, և նրանցից շատերին ներկայացնում մտացածին անուններով: Յ. Զորյանը իհշատակվում է որպես Զորի:<sup>29</sup> Իգուր չէ, որ նրա մասին Վեգներն անթաքուց արտահայտվել է. «Եվ ինչպես է ինձ միշտ հիացնում այս մարդը: Փոքր Ասիայից եկած այս կոչկակարի որդին որքա՞ն արագ բարձրացավ մարդկային գիտու-

<sup>25</sup> **Շիրակյան Ա.**, Կտակն էր նահատակներուն, Երևան, 1991:

<sup>26</sup> **Զարյան Ռ. Վ.**, Հուշապատում. Հասարակ աչքերով դիտված հրաշքներ-Արա Սարգսյան, Ե., 1977, հու. 2, էջ 53:

<sup>27</sup> **Վեգներ Ա. Թ.**, Յինգ մատ գլխիդ վերև, Բեռլին, 1930 (գերմաներեն լեզվով): Տես նաև, Բարկիադի այն կողմում. Արմին Թեոֆիլ Վեգներ, Յինգ մատ գլխիդ վերև: Մի մարդու այս օրերի խոստովանությունը- Գարուն, ամսագիր, Ե., 1991, թիվ 7 (296), էջ 16-19 (նախարանը՝ Ա. Սուշեռյանի, թարգմ.՝ Մ. Սարգսյանի):

<sup>28</sup> *Wegner A. T.* Am Kreuzweg der Welten, Berlin, 1982, p. 224:

<sup>29</sup> **Վեգներ Ա. Թ.**, Յինգ մատ գլխիդ վերև: Մի մարդու այս օրերի խոստովանությունը, էջ 17:

թյան վերին աստիճաններին»:<sup>30</sup>

Եթե 1969թ. Վեգները կրկին անգամ այցելում է Յայաստան, արդեն չկային Յակոր Զորյանն ու իր կինը Եսթերը, սակայն հանդիպումը կայանում է Զորյանների զավակների՝ Եռնայի և Չորիի հետ: Ի՞նչ է գրել նա Զորյանների մասին՝ 1927թ. իր կնոջը՝ Լեռնորե Լանդաուին հասցեագրված նամակներից մեկում՝ «Չես կարող երևակայել, թե ինչ հասարակ կյանքով են ապրում: Արդեն երկու տարի ապրելով, նրանք բնակվում են մի փոքրիկ սենյակում, որ «արոֆեսորների տան» առաջին հարկում է: Բացի մի սեղանից և երկու չներկված աթոռից, նրանք ուրիշ կահույք չունեն: Մի քանի մահճակալ գնելու համար չափազանց աղքատ լինելով՝ նրանք ճարել են «թախտեր», փայտաշեն մահճակալներ, ինչպես ընդունված է Արևելքի աղքատ բնակչության մոտ: Անկյունում թղթով ծածկված մի քանի արկղում պահպում են Զորիի գոքերը, որոնց թվում տեսա նաև մեր գերմանական իին ծանրներին:

Սալօջախին փոխարինում են երկու նավթավառ: Դրանց սպասարկում է տասներեքամյա մի հայ որբ աղջիկ, որին կանչում են գեղեցիկ Ազատ /Frei/ անունով: Սեմյակը ջեղուցվում է մի փոքրիկ, փայտե ծղամներով լցված թիթեյա տուփով: Բայց այդ բոլորով հանդերձ՝ այս մարդիկ աղքատ չեն, մինչև իսկ հիմնականում հարուստ ու երջանիկ. աշխատանքը նրանց մտածելու ժամանակ չի թողնում: Երկու տարվա ընթացքում նրանք չեն կարողացել հագուստ հայրայթել, իսկ Գերմանիայից բերածներն աստիճանաբար նառ գույներ են ընդունում: Զորիի համալսարանական աշխատավարձը մինչև Վերջերս հարյուր ոութլի էր. այնուհանդերձ նա կեսը տալիս է Եղբորը՝ մի փականագործի, ով իր բազմազավակ ընտանիքով տեղափոխվել է Կոստանդնուպոլսից և առ այսօր մնացել է առանց աշխատանքի: Ինչպիսի անձնազորություն է հարկավոր՝ նման զրկանքների և հրաժարումների պայմաններում բնակություն հաստատելու համար այս քաղաքում, որն իր ոուսական ժամանակներից անխնամ, կեղտոտ տներով և ամենուրեք նորակառույց շինություններով սկիզբ առնող փողոցներով հիշեցնում է հետերկրաշարժյան ավերակավայր: Այո՛, ինչպիսի սքանչելի սեր է ղեկավարում այս քշվածներին, որոնք աշխարհի բոլոր ծայրերից այս երկիրն եկան, մի երկիր, որ երբեք անցյալուն չէին էլ ծանաչել»:<sup>31</sup>

Դետաքրքիր անձանափորություն է Եղել Յ. Զորյանի կյանքի անբաժան ուղեկիցն ու ընկերը, նրա կինը՝ Եսթերը, ով ամուսնու հետ կիսեց իր դառը ճակատագիրը: Պոլսում կրթություն ստացած Եսթերը Յակոբին ծանոթանում է նույն դպրոցում, ուր սովորում էին: 1915 թվականին Եսթերն աքսորվում է, աշխատում է որբանոցում: Ըմբռստ բնավորությամբ, բռնություն չհանդուրժող, անհանգիստ ոգու տեր այս հայուհին հեռու էր ընտանեկան անդրդի որոնումներից և միշտ իր ուժերը ներդրել ու նվիրել է հայրենիքին, ազգային հարցերին, ուսումնասիրել մանկավարժություն և հոգեբանություն: Դենց Բեռլինում ուսման տարիներին է՝ 1921 թվականին, նա հանդիպում է Զորյանին, իիշում են իրենց վաղեմի ծանոթությունը, մտերնությունը վերաճում է սիրո: Ընտանիք են կազմում: Նրա երևանյան տարիների կերպարը տալիս է Արմին Վեգները. «...Եսթերին, ինչպես յուրա-

<sup>30</sup> Նույն տեղում:

<sup>31</sup> Նույն տեղում:

քանչյուր կնոջ, մնում են տաճ առավել հետին գործերը: Թեև նրան (ըստ Էության բարձր հոգեոր օժտվածությամբ մեկին) օգնում է ծեռքի շնորհը, բայց փափկասուն ընտանիքից սերելով՝ իր նուրբ ճաշակով նա կրկնակի է տառապում կեղտից: Բացի այդ, որպես ոչ կուսակցական, իր առավելապես անարխիստական արևմտյան դաստիարակությամբ՝ նրա համար դժվար է հասարակության մեջ հաստատվել: Նա չկարողացավ մանկական հոգեբանության դասավանդումը, քանի որ այստեղ ավելի մուկովյան են, քան Մուկվայում: Երեխան, որ երկիր ընկած արևի կտոր է, անշուշտ հաճույքի սատանա է նրա աչքին»:<sup>32</sup>

Նկատենք նաև, որ Հակոբ Զորյանի մասին, 1960-ական թթ. Հայաստան այցելելով՝ պատում է նաև Ծահան Նարալին: Այս մասին գեղեցիկ հիշողություն է բողել լրագրող Կլարա Թերզյանը, ով անձանք է հարցազրույց ունենում նրա հետ:<sup>33</sup> Նարալին իր խոսքի մեջ հատկապես շեշտում է Զորյանի անունը: Գուցե ինչ-որ բան ակնարկելով:

Ստալինյան տարիները կործանեցին մարդկային բազում կյանքեր, խեղվեցին ճակատագրեր: Այն բախտորոշ և ողբերգական եղավ նաև Զորյանների ընտանիքի համար: Ընտանիք, որն ուներ մտավորական շրջապատ, կեցվածք: Մտերիմ լինելով նաև գորդ Զապել Եսայանին, դերասան Յրայա Ներսիսյանին, անզուգական բանաստեղծ Եղիշե Զարենցին, ում հետ ծանոթացել էին Զարենցի բեռլինյան այցի ժամանակ: Ոչինչ աննկատ չմնաց, գործի դրվեց ամեն հնարավոր քայլ: Արտերկրում կրթություն ստացածները կասկածի տակ էին:

1937 թվականին մի զրապարտագրի հինան վրա՝ Ներքին գործերի ժողկոնատը /ՆԿՎԴ/ ծեռքակալում է մտավորականների մի խմբի: Պատճառաբանվում էր, իբրև թե Երևանում գործել է պրոֆեսորներից կազմված մի ընդհատակյա խումբ, որը պատրաստվել է կատարել պետական հեղաշրջում: Զեռքակալվածները թվով 19 պրոֆեսորներ էին, և գործն էլ հայտնի դարձավ՝ «Պրոֆեսորների գործ» անվամբ: Ենթադրյալ խմբի մեջ էին Զորյան ամուսինները, Կարո Սելիբ-Օհանջանյանը, Աշխարհբեկ Քալանթարը, Յովհաննես Նավակատիկյանը, Լևոն Ռոտինյանը, Ստեփան Ղամբարյանը, Պապա Քալանթարյանը, Գևորգ Գրձեյանը, Ասյա Վերմիշյանը, Բեկ Յովսեփյանը, Արտաշես Քալանթարյանը և այլք:

Մի առիթով Զորյանի զավակը պատնել է: «Հայրս չի հասկացել, թե իրեն ինչու են բանտարկել, ինչպես կարելի է մարդու ճակատագրի հետ խաղալ անհիմն մեղադրանքով: Յուսահատ օրեր է ապրել, անձնասպան լինելու փորձ արել»:<sup>34</sup>

«Պրոֆեսորների գործ»-ը քննվում է 1940 թվականին, զինվորական տրիբունալի կողմից: Սղագրության մեջ պահպանվել է հետաքրքիր մի պատմություն, ինչը հետագայում, աքսորից վերադառնալուց հետո՝ պատմել է ազգագրագետ Կարո Սելիբ-Օհանջանյանը: Դատավարության ժամանակ Զորյանին ուղղված դատախազի այն հարցին, թե՝ «ճիշտ է, որ դուք մասնակից եք եղել Թալեարի սպանությանը», Թեհիլերյանի արժանի զինակիցը անվարան պատասխանել է. «Ճիշտ է, և իմ կյանքի ամենալուսավոր էօն է այդ, և հպարտանում եմ դրա հա-

<sup>32</sup> Նշվ. աշխ., էջ 18:

<sup>33</sup> **Թերզյան Կ.**, Ովքե՞՞ր էին Թեհիլերյանի կողքին.- Ազատամարտ, Երևան, 1991, թիւ 42, էջ 5:

<sup>34</sup> **Զարյան Ռ. Վ.**, Մայրամուտից առաջ /Յուշագրություն/, Հակոբ և Էսթեր Զորյաններ, Ե., 1990, հ.2, էջ 111:

մար: Եթե նորից առիթ լիներ, ես դա կըրկնեի...»:<sup>35</sup> Այս էլ դարձել է նրա մեղադրանքը: Սակայն նախկին վրիժառուն նաև ներքին զարմանք է ապրում, որովհետև այդ մասին ոչ ոքի երթեք պատմած չի եղել: Յետո հիշում է, որ գրողներից մեկին, նույնպես ծեռակալված, մի զրույցի պահին, երբ լավ տրամադրությանք էր՝ ակնարկել է:

3. Չորյանն աքսորվում է Ուրալի հեռավոր շրջաններից մեկը: Աքսորի ճանապարհին, մինչև Չելյաբինսկ՝ եղել է Կարո Մելիք-Օհանջանյանի հետ: Ընդհանուր դժբախտությունը բարեկամացնում է նրանց: 1941 թվականի դեկտեմբերի 31-ին բանտում միասին դիմավորում են նոր տարին: Չորյանը վախճանվում է 1942 թվականին: 3. Չորյանի կյանքի վերջին տարիների պատառիկները պահպանվել են ի շնորհիվ Կարո Մելիք-Օհանջանյանի, ով աքսորից տուն դառնալուց հետո տիրություն արեց Չորյանի երեխաներին: Այսպիսի վախճան ունեցավ այն մտավորականը, ով իր կյանքի երիտասարդ տարիներին, անտեսելով ամեն վախ ու արգելք, պայքարի ելավ Արդարության որոննան ու բարձրաձայնման համար:

Եսրեր Չորյանը ևս տառապեց, աքսորվեց երկու անգամ՝ 1937 և 1949 թվականներին: Զերբակալության ընթացքում ոչնչացվեց նրանց ընտանիքի ողջ հարուստ գրադարանը, երեխաները գրկվեցին ամեն ինչից, նույնիսկ բնակարանից: Վախը ստիպում է, որպեսզի բոլորը երես թքեն նույնիսկ նրա զավակներից, և միայն Չորյանների մի ազգական կին՝ Եվգիկ անունով, տեր կանգնեց նրանց:

Եսթերն աքսորվում է Կարագանդա, հետո ավելի հեռու այդ բնակավայրից: Ստիպված էր աշխատել որպես այգու պահակ: Աքսորից վերադառնում է 1946թ., բայց Երևանում ապրել չեն թողնում, բնակվում է Քանաքեռում, իսկ հետո պահանջում են, որ մեկնի Սևան, որտեղ էլ աշխատում է օդերևութաբանական կայանում: Կրկին աքսորվում է 1949թ., դեպի Կրասնոյարսկի Տառա սակավամարդ բնակավայրը: Անմարդկային պայմաններում ապրելով, այնուամենայնիվ, արի և ուժեղ կամքի տեր կին լինելով, իր զավակներին լավատեսական շնչով նամակներ է ուղարկում: ճակատագիրը կարծես ավելի բարեգութ է գտնվում նրա նկատմամբ, և 1954թ., Ստալինի մահից հետո, նա վերադառնում է Հայաստան: Ապրում է մինչև 1962 թվականը, վախճանվելով 70 տարեկան հասակում: Կարծ, սակայն հասցնում է վայելել իր զավակների ջերմությունը, ասելով. «Ամեն ինչ պատրաստ են ներելու, որովհետև երեխաներս ողջ են և լավ մարդ են դարձել...»:<sup>36</sup> Հակոբ Չորյանն արդարացվում է հետմահու:

Հակոբ Չորյանի կերպարը և պայծառ անունն իր ուրույն տեղն ունի Հայ Դատի և պահանջատիրության պատմության մեջ: Խորհրդային տարիներին համալսարանական հրատարակության մի քանի գրքերում կամ ամսագրերում՝ նա ներկայացված է որպես խիստ կոմունիստական հայացքներ ունեցող մտավորական: Թվում է, թե այս մարդը ամենկին էլ Թեհլերյանի կողքին կանգնած երիտասարդը չէ: Բայց որքան էլ բացատրելի է նրա այդ նկարագիրը՝ ելնելով այդ տարիների վարչակարգից ու Երևանությը գաղտնի պահելու ծգոտումից, տարակուսանքի մեջ ես հայտվում արդեն մեր օրերում հրատարակված նրա կենսագրական նյութերին առնչվելիս: Չորյանը կրկին նույն կենսագրությամբ է: Ծնորհակալ լի-

<sup>35</sup> Նշվ. աշխ., էջ 111-112: **Թերզյան Կ.**, Ովքե՞՞ր էին Թեհլերյանի կողքին, էջ 5:

<sup>36</sup> Նույն տեղում:

ԱԵՆՔ ԺԱՄԱՆԱԿԻՆ ՈՒ ԱՅՆ ՄԱՐԴԿԱՆԸ, ՈՎՔԵՐ ՊԱՏՈԱՐԻԿԱՆԵՐ ԵՆ ԹՈՂԵԼ ՈՒ ԻՐԱՏՈՐԱԿԵԼ ԶՈՐՅԱՆԻ ՄԱՍԻՆ. ՍՈՂՈՆՈՆ ԹԵԼԵՐՅԱՆ, ԱՐՄԻՆ ՎԵԳԱՆԵՐ, ՌՈՒԲԵՆ ԶԱՐՅԱՆ, ԿԼԱՐԱ ԹԵՐՈՅԱՆ...

Դակոր Զորյանը քաջ գիտակցել է, որ ունի հոգու և խղճի մեծ պատասխանատվություն, սրբազն պարտը՝ 1,5 միլիոն նահատակների և փրկված ու աշխարհով սփռված հայերի առջև։ 2012թ. նրա մահվան 70-ամյա տարելիցն է, այն ազնվագույն հայի, ով հոգու արդիությամբ միշտ ընդառաջ գնաց ամեն դժվար գործի, նույնիսկ մահին։ Եվ եթե Թելերյանը կանգնեց գերմանական դատարանում իր ազգի դահիճին ոչնչացնելու մեղադրանքով և արդարացվեց, ապա Զորյանն՝ իր հայրենիքում ստալինյան զոհ դարձավ։ Իր ոգու հաղթությունը, իր հպարտանքը եղավ Թալեաթի ահաբեկման հետ կապված պատմությունը։

Ո՞վ գիտե, գուցե գիտեր, որ այլս փրկություն չկար, որ գնալու է անվերադարձ, ու «Պրոֆեսորների գործ»-ի ժամանակ բացեց, հաստատեց իսկությունը։ Գուցե ճակատագիրն է այդպես վարվել, որ մենք գիտենանք, թե ո՞վ էր ապրում մեր կողքին, ում թերևս ոչ ոք չգիտեր։ ճանաչում էին միայն որպես գիտնականի։ Գիտեր միայն պատմությունը, անցյալը և ժամանակը... հ՞նչ էր մտածում, հ՞նչ երազանքներով վերադարձավ հայրենիք, ոչ ոք չգիտե, թերևս կարելի է եղակացնել, որ հայրենիքի, փրկված այս հողակտորի նկատմամբ սերը ավելի զորեղ էր ամեն սարսափից ու վախից։

## СОРАТНИК ТЕГЛЕРЯНА

***M. S. KESHISHYAN***

Ученый, педагог, Акоп Зорян-солдат и соратник известного армянского мстителя Согомона Теглеряна, родился 1894г. в городе Орду (Турция, провинция Трапиzon). В 1912 годы окончил Персперианское училище в Константинополе и в 1915-19гг. учительствовал в городе Шумле /Болгария/. В 1919-20гг. учился в Лозанском университете, а в 1920-25гг. - на факультете политекonomии Берлинского университета. Под руководством известных ученых Зомбарда и Маркварта он защитил кандидатскую диссертацию и получил научную степень доктора философии.

1925г. Правительством Советской Армении был приглашен на Родину. 1925-37гг. он заведовал кафедрой истории армянского народа и был деканом исторического факультета Ереванского государственного университета. Параллельно занимал посты директора Публичной библиотеки (1927-29), Института истории культуры (1932-35) и Государственного исторического музея. Им написано свыше десятков статей.

А. Зорян был членом организации "Немесис", которое возглавлял Шаган Натали. Цель этой организации была уничтожить турецких организаторов Геноцида армян 1915-го года. И это А. Зорян сообщила С. Теглеряну, что Таалеат в Берлине.

В 1937 г. во времена сталинских репрессий А. Зорян был арестован, по "Делу Профессоров", во время суда признался, что гордится своим прошлым. Скончался в ссылке, в 1942 г.

Был оправдан посмертно, после смерти И. Сталина.

## TEHLERIAN'S COMRADE-IN-ARMS

***M. S. KESHISHYAN***

H. Zoryan, the comrade-in-arms of the academic teacher, Armenian avenger Soghomon Thelerian, was

born in 1894 in the town of Ordu (Turkey, Trabizon). In 1912 he graduated from the Perperian collage in Constantinople, in 1915-16 worked as a teacher in Bulgaria (town Shumle). In 1919-20 he studied in the he Lausanne, later, in 1920-25<sup>1</sup> on at the Faculty of Economy of Berlin University. He taught such distinguished scientists like Zombard and Markart.

In 1925 he was invited to homeland by the Government Soviet Armenia. He was the Decan of the faculty of history at Yerevan State University (1925-37), the Head of the Department of History of Armenian culture (1932-35), at the same time he was the director of the National Library (1927-29).

H. Zoryan was the member of "Nemesis" group, leaded by Shahan Natali.

It was he that told S. Tehleryan, that Taliat Pasha was in Berlin. In 1937 he was arrested on the "Professor's case" and was proud of his past in court.

In 1942 H. Zoryan died in exile.

After Stalin's death, he was posthumously acquitted.

## ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆ-ՍՓՅՈՒՌՔ ԱՐԴԻ ՓՈԽՎԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՏՔՍՈՒՄ

Է. Լ. ԶՈՅՐԱԲՅԱՆ  
Պատմական գիտությունների թեկնածու,  
ԵՊՀ դոցենտ

Հայաստան - Սփյուռք փոխհարաբերությունների կառուցման հայեցակարգում Սփյուռքի լինելիության և հայապահպանության գլխավոր առհավատչյան հզոր և անվտանգ Մայր հայրենիքն է: Այս աներկբա ճշմարտությունը մշտակագերակայություն է թե՝ Մայր հայրենիքում և թե՝, առավելապես, Սփյուռքում: Միանգամայն ճիշտ է նկատում Կ. Դալլարյանը, գրելով, - «Կենտրոնաձիգ ուժի՝ հայոց պետականության գոյությունն է բնորոշում արդի Սփյուռքի քաղաքական հատկանիշը: Ի տարբերություն նախորդ դարերի ցրոնքի՝ աշխարհով մեկ սփյուռքած հայությունն այսօր ունի իր քաղաքական հենարանը: Յետևաբար, արդի Սփյուռքն էլ իր հերթին հնարավորին չափ օժանդակում է հայոց պետականության ամրապնդմանը՝ հավաքական ազդեցություն գործադրելով իր բնակած երկրների ու Հայաստանի միջաեւտական հարաբերությունների բնականոն ընթացքի վրա, ինչպես նաև հայության համազգային խնդիրների նկատմամբ օտար տերությունների դիրքորոշման վրա»:<sup>1</sup>

Հայրենիք - Սփյուռք կապի ընկալման հիմքում դնելով միասնական հայրենիքի գաղափարը՝ երկուստեք ջանքեր են գործադրվել այդ կապերը ամրապնդելու և առարկայական դարձնելու իմաստով: Դրանք դրսկորվել են ի սկզբանե՝ թե՝ Հայաստանի առաջին Հանրապետության 1918-1920 թթ. կարճատև գոյության, թե՝ Խորհրդային իշխանության տարիներին՝ հայրենադարձության, Հայկական ընդհանուր բարեգործական միության (ՀԲԸՍ), Հայաստանի օգնության կոմիտե-

<sup>1</sup> Տե՛ս Կ. Դալլարյան, Հայ սփյուռքի պատմություն, Երևան, 2004, էջ 4: